ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԿԱՐԵՆ ԲԵՆԻԱՄԻՆՅԱՆ





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնք  
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, /010/ 250519: /0235/ 22383 artashatmeria@bk.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 80-Ա

**„ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ  
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ  
ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ` ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎԱԾ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ  
ՎՃԱՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով „Տեղական տուրքերի և վճարների մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով. համայնքի ավագանին ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. „Արտաշատ քաղաքի երաժշտական դպրոց,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի 100 % չափով նվազեցման արտոնություն սահմանել՝

1/ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերում ծառայության ժամանակ զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների երեխաների համար.

2/ երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար:

2. „Արտաշատ քաղաքի երաժշտական դպրոց,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի 50 % չափով նվազեցման արտոնություն սահմանել՝

1/ միակողմանի ծնողազուրկ /մահացած ծնող ունեցող/ երեխաների համար.

2/ 1-ին և /կամ/ 2-րդ կարգի հաշմանդամ ծնող ունեցող երեխաների համար.

3/ երեք և ավելի անչափահաս երեխա ունեցող, ընտանիքի անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների երեխաների համար.

4/հաշմանդամ երեխաների համար:

3. „Արտաշատ քաղաքի երաժշտական դպրոց,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծառայություններից օգտվողների համար կիրառվում է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի միայն մեկ արտոնություն:

4. Ոչ արտաշատաբնակ, այդ թվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերում ծառայող ոչ արտաշատաբնակ զինծառայողների երեխաները չեն օգտվում համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի նվազեցման արտոնությունից:

5. Իրավունք վերապահել համայնքի ղեկավարին համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի համար կիրառելու 50-ից 100 %-ի չափով նվազեցման արտոնություն՝ համայնքի ավագանու կողմից սահմանված կարգին, պայմաններին և չափորոշիչներին համապատասխան:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -10

Դեմ -0

Չեռնպահ -0

ԱՍԱՏՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԵՐՄՈՆ

ԽԱԶՍՏՐՅԱՆ ԿԱՐԴԱՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՀՈՎԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ

ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒՐԱԴՅԱՆ ԴԱՎԻԹ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՐԵՆ ԲԵՆԻԱՄԻՆՅԱՆ





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնք  
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, /010/ 250519; /0235/ 22383 artashatmeria@bk.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 79-Ա

### ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՑԱՆԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրում անցկացնելու մասին Արտաշատ համայնքի ղեկավարի 2019 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 215 կարգադրությունը և ընդունելով գույքագրման արդյունքները, համայնքի ավագանին ո Ր Ո Շ ՈՒ Մ է՝

Արտաշատ համայնքի սեփականությունը հանդիսացող Պատկանյան փողոցի թիվ 62Բ, թիվ 62Գ, Մխչյան փողոցի թիվ 119, թիվ 80 բազմաբնակարան բնակելի շենքերը, Աթարբեկյան փողոցի թիվ 156Ա, թիվ 156Բ, Շահումյան փողոցի թիվ 2/նախկին Երկաթգծի դիսպետչերական/շենքերը համայնքապետարանի գույքագրման ցանկից որպես առանձին գույքային միավոր դուրս գրել և գույքագրման սեփականաշնորհված բնակարանների ցանկում ավելացնել նշված շենքերից չսեփականաշնորհված համայնքային սեփականություն հանդիսացող բնակարանները ըստ հասցեների:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -1

ԱՍԱՏՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԵՐՍՈՆ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՀՈՎԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒՐԱԴՅԱՆ ԴԱՎԻԹ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԿԱՐԵՆ ԲԵՆԻԱՄԻՆՅԱՆ





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնք  
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, /010/ 250519: /0235/ 22383 artashatmeria@bk.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 78-Ա

### ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ԲԱԿԵՐՈՒՄ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԴՐԿԱԾ ԶՐՈՒՑԱՐԱՆՆԵՐԻ, ՃՈՃԱՆԱԿՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտաշատ համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի գույքագրում անցկացնելու մասին Արտաշատ համայնքի ղեկավարի 2019 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 215 կարգադրությունը և հիմք ընդունելով գույքագրման արդյունքները, համայնքի ավագանին ո Ր Ո Շ ՈՒ Մ է՝

Համայնքապետարանի գույքագրման ցանկում կատարել փոփոխություններ ըստ խաղահրապարակներում տեղադրված առկա գրուցանների և ճոճանակների:

Կողմ -10

Դեմ -0

Չեռնակահ -0

ԱՍՏՏՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԵՐՄՈՆ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ԿԱՐԴԱՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀՈԿԱԿԻՄՅԱՆ ՀՈԿԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԴԱԿԻԹ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՀԱՍԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

ԿԱՐԵՆ ԲԵՆԻԱՄԻՆՅԱՆ





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնք  
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, /010/ 250519: /0235/ 22383 artashatmeria@bk.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 77-Ա

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԶԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ  
ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ ԸՍՏ ԴՐԱՆՑ ԳՏՆԿԵԼՈՒ ԿԱՅՐԵՐԻ, ԱՌԵՎՏՐԻ ԵՎ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ  
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԼՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԳԻՇԵՐԱՅԻՆ  
ԱՆԴՈՐՐՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԺԱՄԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի  
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40.1-րդ կետով. համայնքի  
ավագանին ո Ր Ո Շ Ո Ւ Մ է՝

1. Արտաշատ համայնքի վարչական տարածքում առևտրի և ծառայությունների  
բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում, ըստ դրանց գտվելու  
վայրերի, առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող  
անձանց կողմից լռությունը կամ գիշերային անդորրն ապահովելու ժամերը սահմանել  
22.00-ից մինչև 7.00-ն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան  
հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -8

ԱՍԱՏՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ԿԱՐԴԱՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՀՈՎԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

Դեմ -2

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԵՐՄՈՆ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՀԱՍԼԵՏ

Ձեռնպահ -0

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԴԱԿԻԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱԿԱՐ



ԿԱՐԵՆ ԲԵՆԻԱՄԻՆՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնք  
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, /010/ 250519: /0235/ 22383 artashatmeria@bk.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 76-Ա

### ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԶԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆԿՈՂ ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿՄԱՆ ԵՆթԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆԸ /ՀԵՌԱԿՈՐՈՒԹՅԱՆԸ/ ՆԵՐԿԱՅԱՑԿՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.2-րդ կետով և „Առևտրի և ծառայությունների մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի օրենքի 15.3-րդ հոդվածի 3-րդ մասով. համայնքի ավագանին ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. „Առևտրի և ծառայությունների մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտները Արտաշատ համայնքի վարչական տարածքում կարող են գտնվել ուսումնական, կրթական, մշակութային, առողջապահական, մարզական և սոցիալական կազմակերպություններից, հիմնարկներից, հաստատություններից, բազմաբնակարան շենքերից, անհատական բնակելի տներից, հանրային սննդի օբյեկտներից, հյուրանոցներից, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցիչների վարչական շենքերից, զբոսայգիներից, այգիներից, պուրակներից, հանգստի կամ ժամանցի համար նախատեսված այլ վայրերից նվազագույնը 400 մետր հեռավարության վրա:

2. Անհատական բնակելի տների և /կամ/ հանրային սննդի օբյեկտների և /կամ / հյուրանոցների և Արտաշատ համայնքի վարչական տարածքում գտնվող „Առևտրի և ծառայությունների մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների միջև սույն որոշման 1-ին կետով սահմանված հեռավորությունը կարող է չպահպանվել անհատական բնակելի տան, հանրային սննդի օբյեկտի, հյուրանոցի սեփականատերերի գրավոր համաձայնության առկայության դեպքում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -10

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՍՏՏՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԵՐՄՈՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԴԱՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀՈԿԱԿԻՄՅԱՆ ՀՈԿԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՑԱԿԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ

ՄԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒՐԱԴՅԱՆ ԴԱԿԻԹ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱԿԱՐ

ԿԱՐԵՆ ԲԵՆԻԱՄԻՆՅԱՆ

*(Handwritten signatures in blue ink)*





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնք  
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, /010/ 250519: /0235/ 22383 artashatmeria@bk.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 75-Ա

### ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԱՏԿԱՆՅԱՆ 61 Ա, Բ, Գ, Դ ՇԵՆՔԵՐԸ ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՑՈՒՑԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ Պատկանյան փողոցի թիվ 61Ա,Բ,Գ,Դ կիսակառույց շենքերը կառուցված են եղել ներկայումս Արարատի մարզի Մրգավանի գյուղական համայնքի վարչական տարածքում: Դեկլարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, և „Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքների 6-րդ հոդվածներին համապատասխան, Հայաստանի Հանրապետության կառավարության 24/05/2005թվականի թիվ 389-Ն որոշումը, Արտաշատ-Մրգավան սահմանագիծը „Ը,, „Ա,, սահմանագծի նկարագրությունը, համայնքի ավագանին ո Ր Ո Շ ՈՒ Մ է՝

Արտաշատի համայնքապետարանի գույքագրման ցանկից Պատկանյան 61Ա,Բ,Գ,Դ կիսակառույց շենքերը /հիմքեր/որպես գույքային միավոր դուրս գրել:

Կողմ -9

Դեմ -1

Ձեռնպահ -0

ԱՍՏԱՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱԿԵՏԻՍՅԱՆ ՀԵՐՄՈՆ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ԿԱՐԴԱՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀՈԿԱԿԻՄՅԱՆ ՀՈԿԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԴԱԿԻԹ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱԿԱՐ

ԿԱՐԵՆ ԲԵՆԻԱՄԻՆՅԱՆ





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնք  
 ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, /010/ 250519: /0235/ 22383 artashatmeria@bk.ru

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 74-Ա

**ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒՍԻՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ  
 ՆԱԽԿԻՆ ՊԱՏԱՆԻ ՏԵԼՆԻԿՆԵՐԻ ԿԱՅԱՆԻ 375000 /ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ  
 ՅՈԹԱՆԱՍՈՒՆՀԻՆԳ ՀԱԶԱՐ / ԴՐԱՄ ՀԱՇՎԵԿՇՈՒՄՅԻՆ ԱՐԺԵՔՈՎ ՇԵՆՔԸ  
 ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՑՈՒՑԱԿԻՑ ԴՈՒՐՍ  
 ԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 23 մարտի 2006 թվականի թիվ 395Ա որոշմամբ և հիմք ընդունելով Արտաշատի քաղաքային համայնքի ավագանու 2006 թվականի փետրվարի 21-ի թիվ 1/22 որոշումը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածին համաձայն համայնքի ավագանին ո Ր Ո Շ ՈՒ Մ է՝

Արտաշատ համայնքի Լուսինյան փողոցի թիվ 9 հասցեում գտնվող նախկին պատանի տեխնիկների կայանի 375000 /երեք հարյուր յոթանասունհինգ հազար/ դրամ հաշվեկշռային արժեքով շենքը դուրս գրել համայնքապետարանի գույքագրման ցանկից:

Կողմ -10

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՍՏՏՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱԿԵՏԻՍՅԱՆ ՀԵՐՄՈՆ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՀՈՎԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՑԱԿԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ 

ՄԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ 

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԴԱԿԻԹ 

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ 

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱԿԱՐ



ԿԱՐԵՆ ԲԵՆԻԱՄԻՆՅԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնք  
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, /010/ 250519; /0235/ 22383 artashatmeria@bk.ru

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 73-Ա

#### **„ԱՐՏԱՇԱՏ-ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ,, ՀՈԱԿ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԵՎ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 50-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով, „Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար 2020 թվականի սեպտեմբերի 12-ին ԱՄԱՀ-ԳՀԱՊԶԲ-20/44 պայմանագրի շրջանակներում ձեռք է բերվել KAMAZ KO-415A(KAMAZ-53212) մակնիշի, 8900000 դրամ արժողությամբ մեկ հատուկ աղբատար և ԱՄԱՀ-ԳՀԱՊԶԲ-20/44/1 պայմանագրի շրջանակներում ձեռք է բերվել SAZ 3502 մակնիշի, 1800000 դրամ արժողությամբ բեռնատար տրանսպորտային տեխնիկաներ. համայնքի ավագանին որոշում է՝

1. Արտաշատ համայնքի սեփականությունը հանդիսացող հատուկ աղբատար KAMAZ KO-415A(KAMAZ-53212) մակնիշի, 8900000 /ութ միլիոն ինը հարյուր հազար/ դրամ արժողությամբ տրանսպորտային տեխնիկան անհատույց օգտագործման իրավունքով հանձնել „Արտաշատ-Կոմունալ սպասարկում,, ՀՈԱԿ-ին:

2. Արտաշատ համայնքի սեփականությունը հանդիսացող հատուկ բեռնատար SAZ 3502 մակնիշի, 1800000 /մեկ միլիոն ութ հարյուր հազար/ դրամ արժողությամբ տրանսպորտային տեխնիկան անհատույց օգտագործման իրավունքով հանձնել „Արտաշատ-Կոմունալ սպասարկում,, ՀՈԱԿ-ին:

3. Արտաշատ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի „Արտաշատ համայնքի սեփականության 2019 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին,, թիվ 50-Ա որոշման ձև Գ-4 հավելվածը լրացնել նոր „13-րդ,, և „14-րդ,, տողերով՝

„13-րդ տողի 1-ին սյունակը՝ „13,, , 2-րդ սյունակը՝ „Հատուկ աղբատար KAMAZ KO-415A(KAMAZ-53212),, , 3-րդ սյունակը՝ „-,, , 4-րդ սյունակը՝ „1990թ.,, , 5-րդ սյունակը՝

„1,, , 6-րդ սյունակը „1,, , 7-րդ սյունակը՝ „լավ,, , 8-րդ սյունակը՝ „անհատույց օգտագործման է հանձնվել „Արտաշատ-կոմունալ սպասարկում „ ՀՈԱԿ-ին,,

„14-րդ տողի 1-ին սյունակը „14,, , 2-րդ սյունակը՝ „Հատուկ բեռնատար SAZ 3502,, 3-րդ սյունակը՝ „-,, , 4-րդ սյունակը՝ „1986թ.,, , 5-րդ սյունակը՝ „1,, , 6-րդ սյունակը՝ „1,, , 7-րդ սյունակը՝ „լավ,, , 8-րդ սյունակը՝ „անհատույց օգտագործման է հանձնվել „Արտաշատ-կոմունալ սպասարկում,, ՀՈԱԿ-ին,,:

Կողմ -10

Դեմ -0

Չեղնակահ -0

ԱՍԱՏՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԵՐՄՈՆ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ԿԱՐԴԱՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՀՈՎԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՅԱԿԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ

ՄԱՅԱԿԱՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՐԱՂՅԱՆ ՂԱԿԻԹ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿՈՎԱՐ

ԿԱՐԵՆ ԲԵՆԻԱՄԻՆՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ  
ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնք  
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, /010/ 250519: /0235/ 22383 artashatmeria@bk.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 72-Ա

**ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի  
ԹԻՎ 50-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով, „Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արտաշատ համայնքի կարիքների համար „Էներգետիկայի հայկական գործակալություն,, հիմնադրամի և Արտաշատի համայնքապետարանի միջև 2020 թվականի մայիսի 18-ին կնքված նվիրաբերության պայմանագրի շրջանակներում, ս/թ հունիսի 5-ին Արտաշատի համայնքապետարանին է հանձնվել „Juice Pro 32EU,, մակնիշի 1 հատ, 618723.88 դրամ արժեքով լիցքավորման կայան՝ էլեկտրական շարժիչով մեքենաների լիցքավորման համար. համայնքի ավագանին որոշում է՝

Արտաշատ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի՝ „Արտաշատ համայնքի սեփականության 2019 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին,, թիվ 50-Ա որոշման „Հիմնական միջոցների գույքագրման,, թիվ 8 ցուցակը /ձև Գ-4/ 15-րդ տողից հետո լրացնել նոր 16-րդ տողով՝

„1-ին սյունակ՝ „16,, , 2-րդ սյունակ՝ „լիցքավորման կայան „Juice Pro 32EU,, մակնիշի,, , 3-րդ սյունակ՝ „Ք. Արտաշատ Օգոստոսի 23-ի թիվ 62,, , 4-րդ սյունակ՝ „05/06/2020թ... , 5-րդ սյունակ՝ „1,, , 6-րդ-սյունակ՝ „1,, , 7-րդ սյունակ՝ „լավ,,:

Կողմ -10

Դեմ -0      Ձեռնպահ -0

ԱՍԱՏՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԵՐՄՈՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՐՁՈՒՄՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՀՈՎԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՅԱԿԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ

ՄԱՅԱԿԱՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՐԱՂՅԱՆ ՂԱԿԻԹ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



ԿԱՐԵՆ ԲԵՆԻԱՄԻՆՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնք  
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, /010/ 250519: /0235/ 22383 artashatmeria@bk.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 71-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԻՄԱՑ ՉԱՆԶՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով. համայնքի ավագանին ո Ր Ո Շ ՈՒ Մ է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների ղիմաց գանձվող վճարների 2021 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի կողմից մատուցվող ծառայությունների ղիմաց գանձվող վճարների համար կիրառել արտոնություններ՝ ելնելով անհրաժեշտությունից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -10

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՍՏՏՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԵՐՄՈՆ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՀՈՎԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ

ՄԱՅԱԿԱՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՐԱՐՅԱՆ ԴԱԿԻԹ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿՐԱՐ



ԿԱՐԵՆ ԲԵՆԻԱՄԻՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ  
ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՑՔԱԶԱՓԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

Հ/Հ	Համայնքի կողմից մատուցվող ծառայության անվանումը	Մահմանված դրույքաչափերը /ՀՀ դրամ/
1	Մահմանել „Արտաշատ քաղաքի Շ. Ազնավուրի անվան մշակույթի կենտրոն,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության վարչական շենքից օգտագործման նպատակով տարածքներ տրամադրելու համար վճարներ՝	
1.1	„Արտաշատ քաղաքի Շ. Ազնավուրի անվան մշակույթի կենտրոն,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության վարչական շենքի մեծ դահլիճը օգտագործման տրամադրելու համար՝ մեկ օրվա համար	100000
1.2	„Արտաշատ քաղաքի Շ. Ազնավուրի անվան մշակույթի կենտրոն,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության վարչական շենքի փոքր դահլիճը օգտագործման տրամադրելու համար՝ մեկ օրվա համար	30000
1.3	„Արտաշատ քաղաքի Շ. Ազնավուրի անվան մշակույթի կենտրոն,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության վարչական շենքից օգտագործման նպատակով տարածքներ տրամադրելու համար՝ մինչև 100 քմ մակերեսը ներառյալ՝ 1 քմ-ի համար ամսական	1000
	101 քմ –ից ավելի մակերես ունեցող տարածքների համար՝ 100000 դրամ և ավել յուրաքանչյուր 1 քմ մակերեսի համար հավելյալ	500
2	Մահմանել „Արտաշատի քաղաքային արտադարձական կենտրոն,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության վարչական շենքից օգտագործման նպատակով տարածքներ տրամադրելու համար վճարներ՝	
2.1	„Արտաշատի քաղաքային արտադարձական կենտրոն,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության վարչական շենքի դահլիճը օգտագործման տրամադրելու համար՝ մեկ օրվա համար	100000

2.2	<p>„Արտաշատի քաղաքային արտադրոցական կենտրոն,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության վարչական շենքից օգտագործման նպատակով տարածքներ տրամադրելու համար՝ մինչև 100 քմ մակերեսը ներառյալ 1 քմ-ի համար ամսական</p>	1000
	<p>101քմ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար՝ 100000 դրամ և ավել յուրաքանչյուր 1 քմ մակերեսի համար հավելյալ</p>	500
3.	<p>„Արտաշատ քաղաքի մանկապատանեկան համալիր մարզադպրոց,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության մարզադաշտը օգտագործման տրամադրելու համար՝ մեկ օրվա համար</p>	100000
4.	<p>„Արտաշատ քաղաքի Ռ. Գուլեցյանի անվան ըմբշամարտի օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոց,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության մարզադահլիճները տրամադրելու համար՝ յուրաքանչյուրին մեկ օրվա համար</p>	50000
5.	<p>Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող հենասյունները վարձակալությամբ տրամադրելու դեպքում յուրաքանչյուր հենասյան համար վարձավճարը սահմանել՝ ամսական</p>	500
6.	<p>Արտաշատի համայնքապետարանի վարչական շենքի առաջին հարկից օգտագործման նպատակով տարածքներ տրամադրելու համար 1 քմ-ի համար սահմանել ամսական</p>	2000 դրամ
7.	<p>Արտաշատի համայնքապետարանի վարչական շենքի երկրորդ և իններորդ հարկերից օգտագործման նպատակով տարածքներ տրամադրելու համար 1 քմ-ի համար սահմանել ամսական</p>	700 դրամ
8.	<p>Համայնքի վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի գործառնական նշանակության փոփոխության ծառայության վճար, ֆիզիկական և իրավաբանական անձանց համար, սահմանել 30000 դրամ, գումարած յուրաքանչյուր քառակուսի մետրի համար հավելյալ՝</p>	300 դրամ
9.	<p>Համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասի գործառնական նշանակության փոփոխության ծառայության վճար, ֆիզիկական և իրավաբանական անձանց համար, սահմանել 30000 դրամ, գումարած յուրաքանչյուր քառակուսի մետրի համար հավելյալ՝</p>	100 դրամ
10.	<p>Միջմարզային և ներմարզային ուղևորափոխադրումներ իրականացնող երթուղային ավտոբուսների և միկրոավտոբուսների համար համայնքի ավտոկանգառներից օգտվելու ծառայության վճար սահմանել տարեկան՝</p>	100000 դրամ

11.	Համայնքում հասցեների տրամադրման ծառայության համար սահմանել՝	5000 դրամ
-----	---	-----------



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնք  
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, /010/ 250519: /0235/ 22383 artashatmeria@bk.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 70-Ն

### 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, „Տեղական տուրքերի և վճարների մասին,, և „Աղբահանության և սանիտարական մաքրման մասին,, օրենքներով, համայնքի ավագանին ո Ր Ո Շ ՈՒ Մ է՝

1. 2021 թվականի համար Արտաշատ համայնքում սահմանել տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն թիվ 1 և թիվ 2 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -10

Դեմ -0

Չեռնպահ -0

ԱՍԱՏՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԵՐՄՈՆ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՀՈՎԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ

ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԴԱՎԻԹ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿՎԱԿԱՐ՝

ԿԱՐԵՆ ԲԵՆԻԱՄԻՆՅԱՆ



ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ  
ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐՈՂ

ԿԿ	Տեղական վճարների անվանումը	Սահմանված դրույքաչափերը /ԿԿ դրամ/
1	Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	5000 /հինգ հազար/
2	Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների /այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը/ կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	5000 /հինգ հազար/
3	Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	5000 /հինգ հազար/
4	Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի /փաթեթների/ նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	2000 /երկու հազար/
5	Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	15000 /տասնհինգ հազար/
6	Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին /վերնիսաժներին/ մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	1000 /մեկ հազար/

7	Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքներ կազմակերպելու համար աղբահանության վճար՝	
7.1	Բնակելի նպատակային նշանակության շենքերում և /կամ/ շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճար՝ ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և /կամ/ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար	200 /երկու հարյուր/
7.2	Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և /կամ/ շինություններում աղբահանության վճար՝	
7.2.1	Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար	50 /հիսուն/
7.2.2	Հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների, հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեղված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար	25 /քսանհինգ/
7.2.3	Վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար	15 /տասնհինգ/
7.2.4	գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար	5 /հինգ/
	գորանոցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար	8 /ութ/
7.2.5	արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով /այդ թվում՝ ավտոկայանատեղի/ մեկ քառակուսի մետր մակերեսի համար	5 /հինգ/
7.2.6	շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, համաձայն 7.2.1-7.2.5 կետերով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է 7.2.1-7.2.5 կետերով սահմանված դրույքաչափերով.	
7.2.7	շինություններում /այդ թվում՝ առանձնացված տնտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում/, որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում,	

	աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շինությունում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է 7.2.1-7.2.5 կետերով սահմանված դրույքաչափերով:	
7.3	Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար	50 /հիտուն/
7.4	Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, կենցաղային ծառայությունների մատուցման վայրերում, որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին	
7.5	Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ 7.2.1-7.2.5 կետերով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանել	
7.5.1	Ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար	3000 /երեք հազար/
7.5.2	Ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար	10000 /տասը հազար/
8	Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝	
8.1	Մեկ սենյականոց բնակարանի համար ամսական	500 /հինգ հարյուր/
8.2	Երկու սենյականոց բնակարանի համար ամսական	800 /ութ հարյուր/
8.3	Երեք սենյականոց բնակարանի համար ամսական	1100 /մեկ հազար հարյուր/
8.4	Չորս սենյականոց բնակարանի համար ամսական	1200 /մեկ հազար երկու հարյուր/
9	Համայնքային ենթակայության նախադարձական կազմակերպությունների ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝	
9.1	Արտաշատ համայնքի երեխաների համար ամսական	8000 /ութ հազար/

9.2	Ոչ արտաշատաբնակ /ունեն մշտական հաշվառում այլ համայնքներում/ երեխաների համար ամսական	16000 /տասնվեց հազար/
10	Համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների՝ ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝	
10.1	Երաժշտական դպրոցի ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝	
10.1.1	Մեկ մասնագիտական առարկայի ուսուցման համար	5000 /հինգ հազար/
10.1.2	Երկու մասնագիտական առարկայի ուսուցման համար	10000 /տաս հազար/
10.1.3	Լրացուցիչ առարկայի ուսուցման համար հավելյալ	2000 /երկու հազար/
10.2	Գեղարվեստի դպրոցի ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել	3000 /երեք հազար/
11	Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար	1000 /մեկ հազար/
12	Համայնքը սպասարկող անասնաբույժի ծառայություններից օգտվելու համար՝	
12.1	Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվության համար	700 /յոթ հարյուր/
12.2	Ծննդօգնության թեթև միջամտության համար	1500 /մեկ հազար հինգ հարյուր/
12.3	Ծննդօգնության ծանր միջամտության համար	7000 /յոթ հազար/
12.4	Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից /բացառությամբ „Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում,, պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների/՝	
12.4.1	Մանր կենդանիների համար	200 /երկու հարյուր/
12.4.2	Խոշոր կենդանիների համար	300 /երեք հարյուր/
12.5	Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծերի դեմ պայքարի համար	500 /հինգ հարյուր/
12.6	Ախտահանություն՝ մեկ քառակուսի մետրի համար	250 /երկու հարյուր հիսուն/
12.7	Միջատազերծում /դիզինսեկցիա/՝ մեկ քառակուսի մետրի համար	150 /մեկ հարյուր հիսուն/

12.8	Կրճողների ոչնչացում /դեռատիզացիա/ մեկ քառակուսի մետրի համար	200 /երկու հարյուր/
12.9	Արհեստական սերմնավորման համար	6000 /վեց հազար/
12.10	Մանր կենդանու հերժման համար	1000 /մեկ հազար/
12.11	Խոշոր կենդանու հերժման համար	3000 /երեք հազար/
12.12	Կենդանու բուժում՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից, յուրաքանչյուր այցելության համար	1200 /մեկ հազար երկու հարյուր/
12.13	Մանր կենդանու նախասպանդային զննման համար	1000 /մեկ հազար/
12.14	Խոշոր կենդանու նախասպանդային զննման համար	2000 /երկու հազար/

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ  
ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐՈՂ

ԸԸ	Տեղական տուրքերի անվանումը	Սահմանված դրույքաչափերը /ԸԸ դրամ/
1	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության /տեղադրման/ /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ թույլտվության համար.	
1.1	Հիմնական շենքերի և շինությունների համար՝ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար	15000 /տասնհինգ հազար/
1.2	1.1 կետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝	
1.2.1	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար	30000 /երեսուն հազար/
1.2.2	500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար	50000 /հիսուն հազար/
1.2.3	1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար	50000 /հիսուն հազար/
1.2.4	3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար	100000 /մեկ հարյուր հազար/
1.3	Ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝	
1.3.1	մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար	3000 /երեք հազար/
1.3.2	20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար	5000 /հինգ հազար/

2	Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝	
2.1	Չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն	3000 /երեք հազար/
2.2	Բացի շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքներից նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքերի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում /կամ/ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, և, բացի 2.1 կետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.	
2.3	Նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը	
3	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջող դեպքերի/ թույլտվության համար	5000 /հինգ հազար/
4	Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի համար՝ օրացուցային տարվա համար	200000 /երկու հարյուր հազար/
5	Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար	60000 /վաթսու հազար/
6	Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից	50000

	պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար	/հիսուն հազար/
7	Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝	
7.1	Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝	
7.1.1	մինչև 26 քառակուսի մետր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	5250 /հինգ հազար երկու հարյուր հիսուն/
7.1.2	26-ից մինչև 50 քառակուսի մետր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	9000 /ինը հազար/
7.1.3	50-ից մինչև 100 քառակուսի մետր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	11250 /տասնմեկ հազար երկու հարյուր հիսուն/
7.1.4	100-ից մինչև 200 քառակուսի մետր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	15000 /տասնհինգ հազար/
7.1.5	200-ից մինչև 500 քառակուսի մետր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	25500 /քսանհինգ հազար հինգ հարյուր/
7.1.6	500 և ավելի քառակուսի մետր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	33750 /երեսուներեք հազար յոթ հարյուր հիսուն/
7.2	Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար	
7.2.1	մինչև 26 քառակուսի մետր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	5250 /հինգ հազար երկու հարյուր հիսուն/
